



Արարատյան բակալավրիատ

Արարատյան բակալավրիատի  
ավագ դպրոցի  
Առարկայական վերջնարոյունքներ

---

Հայոց Լեզու և գրականութուն  
հայագիտական առարկայախմբի խորացված  
ուսուցման համար

Ծրագիրը նախատեսված է 2016- 2017 թթ. քննական շրջանի համար

## Բովանդակություն

1	ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ .....	3
	Առարկայի նպատակները .....	3
	Առարկայի բովանդակությունը .....	4
	10-րդ դասարան .....	4
	11-րդ դասարան .....	10
	12-րդ դասարան .....	15
2	Հայ գրականություն .....	19
	10-դասարան .....	19
	11-րդ դասարան .....	27
	12-րդ դասարան .....	34
3	Առարկայի գնահատման սկզբունքները.....	42

# 1 ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

## Առարկայի նպատակները

ԱԲ-ի «Հայոց լեզու» (խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ) առարկան հնարավորություն է տալիս աշակերտներին բարձրացնելու մայրենի լեզվի կիրառության մակարդակը՝ ուսումնասիրելով լեզվի հիմքային հասկացությունները թիրախավորված տեքստային նյութերի և քննախոսության միջոցով: Առարկայի շրջանակներում մայրենի լեզուն ուսումնասիրվում է և՛ որպես հաղորդակցության միջոց, և՛ որպես ինքնուրույն թեմատիկ միավոր՝ ուղղված հայերենի քերականական կառուցվածքի, լեզվաոճական առանձնահատկությունների իմացության ամրապնդմանը, հետազոտական հմտությունների զարգացմանը, տեքստային նյութերի վերլուծությանը և բանավեճի միջոցով կարծիքների փոխանակմանը:

Աշակերտները ծանոթանում են, թե ինչպես է լեզուն գործածվում տարբեր ոճերում, խոսքային զանազան իրադրություններում, լեզվական արտահայտչամիջոցները ինչպես են ներգործում ընթերցողի կամ լսարանի վրա: Ի հավելումս այս ամենի՝ նրանք ձեռք են բերում հաղորդակցական հմտություններ առօրյա կյանքի համար:

Առարկայի նպատակն է հնարավորություն տալ աշակերտին՝

- կառուցելու կանոնակարգված և նպատակային բանավոր և գրավոր խոսք՝ դրսևորելով հայերենի քերականական կառուցվածքի, լեզվաոճական առանձնահատկությունների իմացություն:
- ծանոթանալու փաստարկված խոսք կառուցելու սկզբունքներին, զարգացնելու փաստարկելու հմտությունները:
- հասկանալու և արժևորելու իրեն ուղղված խոսքը և դրա նկատմամբ համապատասխան վերաբերմունք դրսևորելու:
- արագ և ճիշտ կողմնորոշվելու խոսքային զանազան իրավիճակներում, հանպատրաստից բանավոր ելույթներ ունենալու, տիրապետելու բանավեճ վարելու սկզբունքներին:
- խթանելու ստեղծագործական երևակայությունն ու պատկերավոր մտածողությունը:
- զարգացնելու բազմաբնույթ և բարդ տեքստեր ընկալելու, քննադատական վերաբերմունք ցուցաբերելու, վերլուծելու կարողություններ՝ քերականական բազմազան կառույցների ճիշտ և տեղին գործածությամբ:
- քննելու և մեկնաբանելու տարբեր ոճերի տեքստերի բառապաշարը, լեզվական միահյուսումները:
- աշխատելու գեղարվեստական և ոչ գեղարվեստական տեքստերի հետ, կատարելու լեզվաոճական վերլուծություն և համադրական աշխատանք:
- զարգացնելու տարբեր աղբյուրների հետ աշխատելու հմտություններ, տեղեկույթը ընկալելու, նրա նկատմամբ քննական մոտեցում ցուցաբերելու կարողություններ:

10-րդ դասարան

<i>10-րդ դասարան</i>	
<b>Թեմա</b>	<b>Վերջնարդյունք</b>
<b>1.Լեզու</b>	
<p>1.1.Լեզվի հասարակական դերը, հիմնական հատկանիշները</p> <p>1.2.Հայոց լեզվի ձևավորումը</p> <p>1.3.Հայոց լեզվի զարգացման փուլերը՝ գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար</p> <p>1.4.Գրական լեզու և բարբառներ</p> <p>1.5.Աշխարհաբարի զարգացման ընթացքը, արևելահայերեն և արևմտահայերեն</p> <p>1.6.Արևմտահայերենի հնչյունական համակարգը, բառապաշարը</p> <p>1.7.Քերականական տարբերությունները արևելահայերենում և արևմտահայերենում</p>	<p>-ներկայացնել և արժևորել լեզվի դերը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում</p> <p>-ընկալել լեզվի դերը որպես հաղորդակցման կարևոր միջոց և կիրառել այն նպատակային</p> <p>- բնութագրել լեզուն որպես մտածողության արտահայտման ձև</p> <p>-նկարագրել հայոց լեզվի պատմական զարգացումը</p> <p>- տարբերել գրաբարով և միջին հայերենով ստեղծված գրական ժառանգությունը</p> <p>- ներկայացնել բարբառների առաջացման ճանապարհները</p> <p>- բացատրել բարբառների միջև եղած տարբերությունների պատճառները</p> <p>-ճանաչել հայերենի բարբառները, գնահատել նրանց դերը</p> <p>-բացատրել գրական հայերենի երկու տարբերակների առաջացման պատճառները</p> <p>-տարբերել արևմտահայերենի հնչյունների արտասանությունը</p> <p>-համեմատել և հակադրել արևմտահայերենի և արևելահայերենի հնչյունական համակարգը, բառապաշարը</p> <p>-կիրառել այս բաժնում ստացած գիտելիքները գրական ստեղծագործություններ ուսումնասիրելիս</p>
<b>2. Խոսք</b>	
<b>2.1. Խոսք</b>	- բնութագրել խոսքը որպես լեզվի կիրառական տարբերակ

<p><b>2.2. Խոսքի դրսևորման ձևերը</b></p> <p>2.2.1. Համառոտ և ծավալուն խոսք</p> <p>2.2.2. Բանավոր և գրավոր խոսք</p> <p>2.2.3. Մենախոսություն և երկխոսություն</p> <p>2.2.4. Արտաքին և ներքին խոսք</p> <p>2.2.5. Հեղինակային և ուրիշի խոսք</p>	<ul style="list-style-type: none"> <li>- համեմատել և հակադրել լեզուն և խոսքը՝ ցույց տալով նրանց փոխադարձ կապը և տարբերությունները</li> <li>- ներկայացնել և բացատրել խոսքի դրսևորումները ըստ ծավալի, արտահայտման եղանակի, պատկանելության, մասնակիցների քանակի</li> <li>-տարբերել հակիրճ և ծավալուն խոսքի ոճական դերը բանավոր և գրավոր խոսքում</li> <li>- սահմանել և բնութագրել բանավոր և գրավոր խոսքը</li> <li>-տալ օրինակներ բանավոր և գրավոր խոսքերի, մեկնաբանել դրանց միջև եղած բառապաշարային և խոսքային կառույցների տարբերությունները</li> <li>-ներկայացնել բանավոր խոսքում արտալեզվական գործոնների դերը</li> <li>-կիրառել բանավոր խոսքի տեսակներ համապատասխան իրավիճակներում</li> <li>-տարբերել մենախոսության և երկխոսության առանձնահատկությունները</li> <li>-գրավոր խոսքում կերպարը զարգացնել՝ գործածելով մենախոսություն կամ երկխոսություն</li> <li>-մեկնաբանել գրական տեքստերում հեղինակային խոսքի ազդեցությունը դիպաշարի և հերոսների կերպավորման վրա</li> <li>-ըմբռնել ուղղակի խոսքի հաղորդակցական բնույթը, հասկանալ խոսքի բովանդակությունը, ճիշտ վերարտադրելու կարևորությունը</li> <li>- գրավոր և բանավոր խոսքում կիրառել այս բաժնում ստացած գիտելիքներն ըստ անհրաժեշտության</li> </ul>
<p><b>3. Խոսքի արժանիքներ</b></p>	
<p>3.1. Ճշտություն</p> <p>3.2. Ճշգրտություն և հստակություն</p> <p>3.3. Պարզություն, մատչելիություն</p> <p>3.4. Տրամաբանականություն, համապատասխանություն և բնականություն</p> <p>3.5. Սեղմություն</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել և մեկնաբանել խոսքի ազդեցությունը անհատների և հանրության վրա</li> <li>-բնութագրել խոսքի արժանիքները՝ որպես գրագետ, կուռ, ազդեցիկ խոսքի կառուցման ամբողջական համակարգ</li> <li>-բնութագրել խոսքի ճշտությունը՝ որպես հաղորդակցական գլխավոր հատկանիշ, որով պայմանավորված է փոխընկալումը</li> <li>-սահմանել խոսքի ճշգրտությունն ապահովող հիմնական հատկանիշները՝ առարկայի իմացություն, բառընտրություն և տրամաբանականություն</li> </ul>

<p>3.6.Պատկերավորություն և արտահայտչականություն</p>	<p>-ներկայացնել խոսքի մատչելիությունը՝ որպես տեղեկատվության ընկալման հեշտ միջոց</p> <p>-իմասալ և կիրառել սեղմ խոսք կառուցելու տարբեր ձևեր, խուսափել բառաշատությունից, անհարկի կրկնություններից</p> <p>-քննել սեղմ և ծավալուն խոսքերի ազդեցությունը ունկնդիրների վրա</p> <p>-ներկայացնել և մեկնաբանել խոսքի տրամաբանականությունն ապահովող կարևոր գործոնները՝ տեքստի կառուցվածքային և իմաստային բաղադրիչների սերտ կապը, տրամաբանության օրենքների պահպանումը</p> <p>- գնահատել խոսքի ձևավորման հատուկ եղանակներն ու միջոցները, որոնց շնորհիվ խոսքը դառնում է պատկերավոր ու արտահայտիչ</p> <p>- գրավոր և բանավոր խոսքում կիրառել այս բաժնում ստացած գիտելիքներն ըստ անհրաժեշտության</p>
---	---

**4.Արտահայտչականություն. պատկերավորման-արտահայտչական միջոցներ**

<p>4.1.Պատկերավորման միջոցներ</p> <p>4.1.1.Փոխաբերություն</p> <p>4.1.2. Փոխանունություն</p> <p>4.1.3.Մակդիր</p> <p>4.1.4.Համեմատություն</p> <p>4.1.5.Անձնավորում</p> <p>4.1.6.Խորհրդանիշ</p> <p>4.1.7.Չափազանցություն</p> <p>4.1.8.Նվազաբերություն</p>	<p>-ներկայացնել խոսքի ձևավորման հատուկ եղանակներն ու միջոցները, որոնց շնորհիվ խոսքը դառնում է պատկերավոր ու արտահայտիչ</p> <p>-ընկալել և գնահատել բառ-պատկերի դերը և նշանակությունը գեղարվեստական խոսքում</p> <p>-կիրառել պատկերավորման միջոցները՝ խոսքի հուզականությունը շեշտելու և պատկերավոր մտածողությունը զարգացնելու համար</p> <p>-մեկնաբանել խոսքային անսովոր կառույցում գործածված պատկերավորման միջոցների ներգործուն ազդեցությունը, ոճական երանգավորումը</p> <p>-տարբերել պատկերավորման միջոցներից յուրաքանչյուրի ոճական նշանակությունը և կիրառման նպատակը խոսքում</p> <p>-ընկալել պատկերավորման միջոցներից յուրաքանչյուրի կառուցման ոճական հնարանքները</p> <p>- գրավոր և բանավոր խոսքում կիրառել այս բաժնում ստացած գիտելիքներն ըստ անհրաժեշտության</p>
--	--

<p><b>4.2.Արտահայտչական միջոցներ</b></p> <p>4.2.1. Ճարտասանական հարց</p> <p>4.2.2. Ճարտասանական դիմում</p> <p>4.2.3. Ճարտասանական բացականչություն</p> <p>4.2.4. Կրկնություններ</p> <p>4.2.5. Շրջադասություն</p> <p>4.2.6. Աստիճանավորում</p> <p>4.2.7. Հակադրություն</p> <p>4.2.8. Բառախաղ</p> <p>4.2.9. Չեղչում</p>	<p>-ընկալել և ներկայացնել խոսքի արտահայտչությունը՝որպես խոսողի հոգեվիճակն ու ապրումները արտահայտող հատկանիշ</p> <p>-մեկնաբանել խոսքի արտահայտչության գնահատող բնույթը</p> <p>-բացատրել արտահայտչական միջոցների՝ շարահյուսական տարբեր կառույցներով արտահայտված ոճական հնարքները</p> <p>- տարբերել արտահայտչական միջոցներից յուրաքանչյուրի ոճական նշանակությունը և կիրառման նպատակը խոսքում</p> <p>- գրավոր և բանավոր խոսքում կիրառել այս բաժնում ստացած գիտելիքներն ըստ անհրաժեշտության</p>
<p><b>5. Ոճագիտություն</b></p>	
<p><b>5.1. Ոճ, ոճերի դասակարգումը.</b></p> <p>գործառական, իրադրական ոճեր անհատական ոճ</p>	<p>-ընկալել և բնութագրել ոճը որպես խոսքի արտահայտման որոշակի ձև, խոսքի կառուցման յուրօրինակություն</p> <p>-ընկալել ոճի բազմազանությունը՝ պայմանավորված հաղորդակցման բնագավառի առանձնահատկություններով, խոսողի անհատական լեզվական հակումներով</p> <p>- գրավոր և բանավոր խոսքում կիրառել այս բաժնում ստացած գիտելիքներն ըստ անհրաժեշտության</p>
<p><b>5.2. Գործառական ոճերի դասակարգումը</b></p> <p>5.2.1. Գործառական ոճերի դասակարգման սկզբունքները</p> <p>5.2.2. Գործառական ոճերի տեսակները, առանձնահատկությունները</p>	<p>-ներկայացնել և բնութագրել գործառական ոճերի դասակարգման սկզբունքներն ըստ հանրային կյանքի ոլորտների</p> <p>- թվարկել գործառական ոճերը՝ որպես լեզվի խոսքային տարբերակներ</p> <p>-տարբերել գործառական ոճերի բառային, քերականական, արտահայտչական հատկանիշները</p> <p>-համեմատել և հակադրել գեղարվեստական և ոչ գեղարվեստական տեքստերը՝ մեկնաբանելով ոճական նմանություններն ու տարբերությունները</p> <p>- գրավոր և բանավոր խոսքում կիրառել այս բաժնում ստացած գիտելիքներն ըստ անհրաժեշտության</p>

<p><b>5.3. Գիտական ոճ</b></p> <p>5.3.1. Գիտական առանձնահատկությունները</p> <p>5.3.2. Գիտական ոճի եկթառները</p> <p>5.3.3. Գիտական տեքստի կառուցվածքը, տեքստի մասերը</p> <p>5.3.4. Վերնագիր, բնաբան</p> <p>5.3.5. Առաջաբան, վերջաբան, ներածություն,</p> <p>5.3.6. Ծանոթագրություններ, ցանկեր 5.3.7. Ամփոփում և հավելված</p> <p>5.3.8. Խոսքաշար և պարբերություն</p> <p>5.3.9. Պարբերությունների մեջ մտնող նախադասությունների իմաստային կապը</p> <p>5.3.10. Պարբերությունների առանձնացումը</p>	<p>- տարբերակել խոսքի դրսևորման ձևերն ու եղանակները</p> <p>-թվարկել գործառական ոճերը՝ որպես լեզվի խոսքային տարբերակներ</p> <p>-լեզվական որոշակի համակարգով բնութագրել գիտական ոճը</p> <p>-ներկայացնել լեզվական և ոճական նորմայի փոփոխարարությունը</p> <p>-սահմանել և գնահատել ոճականորեն չեզոք բառապաշարը</p> <p>-ներկայացնել գիտաբաների դերը գիտական ոճում</p> <p>-տարբերակել և մեկնաբանել գիտական տեքստի բաղադրիչները</p> <p>-գնահատել լեզվի գործառույթներից (հաղորդում, հաղորդակցում, ներգործում) յուրաքանչյուրի կարևորությունը գիտական ոճում</p> <p>-համադրել և հակադրել գիտական ոճի գրավոր և բանավոր դրսևորումները</p> <p>-վերլուծել գիտական տեքստը, նշել նրա կառուցման սկզբունքները</p> <p>-տեքստից առանձնացնել գիտական ոճին բնորոշ իմաստաբանական, բառապաշարային, քերականական և հուզական-արտահայտչական հատկանիշները և քննել դրանք</p> <p>- գրավոր և բանավոր խոսքում կիրառել այս բաժնում ստացած գիտելիքներն ըստ անհրաժեշտության</p>
--	--



<p><b>5.4. Վարչական ոճ</b></p> <p>5.4.1. Վարչական ոճի առանձնահատկությունները</p> <p>5.4.2. Վարչական ոճի ենթաոճերը</p> <p>5.4.3. Օրենսդրական ենթաոճի ժանրերը. սահմանադրություն, օրենք, կանոնադրություն և այլն</p> <p>5.4.5. Դիվանագիտական ենթաոճի ժանրերը. նոտա, պայմանագիր և այլն</p> <p>5.4.6. Գրասենյակային ենթաոճի ժանրերը. դիմում, տեղեկանք, ստացական, արձանագրություն, ինքնակենսագրություն, բնութագիր, երաշխավորագիր</p>	<p>-բնութագրել վարչական ոճը՝ որպես լեզվական որոշակի համակարգ</p> <p>-թվարկել վարչական ոճի առանձնահատկությունները</p> <p>-գնահատել լեզվի գործառույթներից (հաղորդում, հաղորդակցում, ներգործում) յուրաքանչյուրի կարևորությունը վարչական ոճում</p> <p>-ներկայացնել և մեկնաբանել վարչական ոճի կիրառության ոլորտները, բազմաթիվ ենթաոճերի առկայությունն այս ոճում</p> <p>-տեքստից առանձնացնել վարչական ոճին բնորոշ իմաստաբանական, բառապաշարային, քերականական և հուզական-արտահայտչական հատկանիշները</p> <p>-համեմատել գիտական և վարչական ոճերը, մեկնաբանել ոճական միահյուսումները գրավոր խոսքում</p> <p>- գրավոր և բանավոր խոսքում կիրառել այս բաժնում ստացած գիտելիքներն ըստ անհրաժեշտության</p>
<p><b>5.5. Հրապարակախոսական ոճ (Հրապարակային խոսք)</b></p> <p>5.5.1. Հրապարակախոսական ոճի առանձնահատկությունները</p> <p>5.5.2. Մամուլի լեզվի ենթաոճերը. առաջնորդող հոդված, պաշտոնական հաղորդագրություն, թղթակցություն և այլն</p> <p>5.5.3. Հրապարակային խոսքի ուսմունքը (ճարտասանություն)</p> <p>5.5.4. Հրապարակային խոսքի ենթաոճերը</p>	<p>-լեզվական որոշակի համակարգով բնութագրել հրապարակախոսական ոճը</p> <p>-գնահատել լեզվի գործառույթներից (հաղորդում, հաղորդակցում, ներգործում) յուրաքանչյուրի կարևորությունը հրապարակախոսական ոճում</p> <p>-բնորոշել մամուլի լեզվի հիմնական առանձնահատկությունները</p> <p>- քննել և մեկնաբանել հոդվածների կառուցվածքային, լեզվաոճական և բովանդակային հարցերը</p> <p>-վերլուծել և մեկնաբանել տպագիր և էլեկտրոնային մամուլի հրապարակումները</p>

<p>5.5.5. Հրապարակային խոսքի ներգործության պայմանները. խոսքի տեղիություն, խոսքի ապացուցում, խոսքի հուզականություն</p>	<p>-քննել և գնահատել նորեյան մրցանակակիրների հրապարակային խոսքի կառուցվածքային և լեզվաոճական առանձնահատկությունները</p> <p>-նկարագրել հրապարակախոսական ոճի առանձնահատկությունները</p>
<p>5.5.6. Հրապարակային խոսքի նախապատրաստումը</p>	<p>-կատարել տեքստի վերլուծություն՝ առանձնացնելով հրապարակախոսական ոճին բնորոշ իմաստաբանական, բառապաշարային, քերականական և հուզական-արտահայտչական հատկանիշները</p>
<p>5.5.7. Հրապարակային խոսքի կառուցվածքը</p>	<p>-համադրել և հակադրել հրապարակախոսական ոճի գրավոր և բանավոր դրսևորումները</p> <p>- գրավոր և բանավոր խոսքում կիրառել այս բաժնում ստացած գիտելիքներն ըստ անհրաժեշտության</p>

## 11-րդ դասարան

11-րդ դասարան	
Թեմա	Վերջնարդյունք
<b>1. Փաստարկված խոսք</b>	
<p>1.1.Փաստարկված խոսք կառուցելու սկզբունքները</p>	<p>-բնութագրել փաստարկված խոսք կառուցելու սկզբունքները</p> <p>-գնահատել տրված տեքստում խոսքի փաստարկվածությունը</p> <p>-կիրառել այս բաժնում ստացած գիտելիքները փաստարկված խոսք կառուցելիս</p>
<b>2. Բանավեճի արվեստ</b>	
<p>2.1.Բանավեճի տեսակները</p> <p>2.2.Բանավեճի բաղադրիչները</p> <p>2.3.Բանավեճ վարելու սկզբունքները</p>	<p>-բնորոշել բանավեճի տեսակները</p> <p>-մեկնաբանել բանավեճի բաղադրիչները</p> <p>-տարբերակել բանավեճ-պատերազմը բանավեճ-արվեստից</p> <p>-գնահատել բանավեճի սկզբունքները</p> <p>-հակադրել բանավեճի տեսակները</p> <p>-վերլուծել ներկայացված բանավեճերը</p> <p>-կիրառել այս բաժնում ստացած գիտելիքները բանավեճերում և հանրային ելույթներում</p>

<b>3. Առօրյա-խոսակցական ոճ (խոսակցական ոճ)</b>	
<p>3.1.Առօրյա-խոսակցական ոճի առանձնահատկությունները</p> <p>3.2.Երկխոսությունը առօրյա-խոսակցական ոճում</p> <p>3.3.Առօրյա-խոսակցական ոճի կիրառման ոլորտները</p>	<p>-տարբերակել լեզվական միավորները գրական և համազգային մակարդակներում</p> <p>-լեզվական որոշակի համակարգով բնութագրել առօրյա-խոսակցական ոճը</p> <p>-գնահատել լեզվի գործառույթներից (հաղորդում, հաղորդակցում, ներգործում) յուրաքանչյուրի կարևորությունը առօրյա-խոսակցական ոճում</p> <p>-տեքստից առանձնացնել առօրյա-խոսակցական ոճին բնորոշ իմաստաբանական, բառապաշարային, քերականական և հուզական-արտահայտչական հատկանիշները</p> <p>-քննել և մեկնաբանել սոցիալական կայքերում գործածվող խոսակցական լեզուն</p> <p>- գրավոր և բանավոր խոսքում կիրառել այս բաժնում ստացած գիտելիքներն ըստ անհրաժեշտության</p>
<b>4. Գեղարվեստական ոճ</b>	
<p>4.1.Գեղարվեստական ոճի առանձնահատկությունները</p> <p>4.2.Երկխոսությունը և մենախոսությունը գեղարվեստական ոճում</p> <p>4.3.Գեղարվեստական ոճի և մյուս ոճերի փոխկապակցվածությունը</p> <p>4.4.Առօրյա-խոսակցական ոճի գործածությունը գեղարվեստական ոճում</p> <p>4.5.Հրապարակախոսական և գեղարվեստական ոճերի միահյուսումը</p>	<p>-թվարկել և բնութագրել գեղարվեստական ոճին բնորոշ իմաստաբանական, բառապաշարային, քերականական և հուզական-արտահայտչական հատկանիշները</p> <p>-ներկայացնել և մեկնաբանել լեզվի պատկերավորման և արտահայտչական միջոցները</p> <p>-գնահատել պատկերավորման և արտահայտչական միջոցների նշանակությունը գեղարվեստական պատկերի ստեղծման գործում</p> <p>-տարբերակել և համեմատել գեղարվեստական և հրապարակախոսական, գեղարվեստական և առօրյա-խոսակցական ոճերը</p> <p>-հակադրել գիտական և գեղարվեստական ոճերը</p>

որոշակի ժանրերում. ակնարկ, պարողիա և այլն	<p>-գնահատել լեզվի գործառնություններից (հաղորդում, հաղորդակցում, ներգործում) յուրաքանչյուրի կարևորությունը գեղարվեստական ոճում</p> <p>-տեքստերում, բնագրերում առանձնացնել և բնութագրել այն լեզվական միավորները, որոնք պայմանավորված են հեղինակի ինքնատիպությամբ ու անհատականությամբ</p> <p>-կատարել տեքստի վերլուծություն՝ նշելով գեղարվեստական ոճի առանձնահատկությունները</p> <p>- գրավոր և բանավոր խոսքում կիրառել այս բաժնում ստացած գիտելիքներն ըստ անհրաժեշտության</p>
<b>5. Անհատական ոճ</b>	
<p>5.1.Անհատական ոճի առանձնահատկությունները</p> <p>5.2.Գրողի ոճ</p>	<p>-սահմանել և մեկնաբանել հեղինակի անհատականությունը</p> <p>-պարզաբանել <i>գրողի բառապաշար, գրողի ոճ</i> հասկացությունները</p> <p>-ներկայացնել գրող-ընթերցող փոխհարաբերությունն անհատական ոճում</p> <p>-տեքստերում, բնագրերում առանձնացնել և բնութագրել այն լեզվական միավորները, որոնք պայմանավորված են հեղինակի ինքնատիպությամբ ու անհատականությամբ</p> <p>- գրավոր և բանավոր խոսքում կիրառել այս բաժնում ստացած գիտելիքներն ըստ անհրաժեշտության</p>
<b>6. Իրադրական ոճ</b>	
6.1 Իրադրական ոճի տեսակները	<p>-ներկայացնել խոսող-ունկնդիր փոխհարաբերությունն իրադրական ոճերում</p> <p>-գնահատել լեզվի գործառնություններից (հաղորդում, հաղորդակցում, ներգործում) յուրաքանչյուրի կարևորությունը իրադրական ոճերում</p> <p>-համեմատել խոսքային տարբեր իրավիճակներ</p> <p>-քննարկել լեզվական միջոցների ընտրությունն իրադրական ոճերում, տարբերակել դրանք</p> <p>- գրավոր և բանավոր խոսքում կիրառել այս բաժնում ստացած գիտելիքներն ըստ անհրաժեշտության</p>
<b>7. Բառագիտական ոճաբանություն Բառապաշարի շերտերը և նրանց ոճաբանական բնութագիրը</b>	
7.1.Համագործածական բառեր	-նկարագրել լեզվի նյութական բաղադրիչները, համեմատել դրանց կիրառության

7.2. Հնարանություններ. Լրանց ոճական արժեքը	տեսակները	և	առանձնահատկություններն ու ոճական երանգավորումները
7.3. Նորարանություններ. Լրանց ոճական արժեքը	տեսակները	և	-պարզաբանել այն սկզբունքները, որոնց հիման վրա հնարավոր է դասակարգել լեզվի ողջ բառային կազմը
7.4. Դիպլոմային բառեր			-տարբերակել բառի անվանողական դերը նրա հուզական-զգացական գործառնությունից
7.5. Փոխառություններ օտարաբանություններ		և	-պարզաբանել յուրաքանչյուր բառային միավորի ոճական նպատակադրումը
7.6. Տերմիններ			-բնութագրել յուրաքանչյուր բառաշերտի դասակարգման չափանիշներն ու սահմանները
7.7. Բարբառային ժողովրդախոսակցական Լրանց ոճական արժեքը		և	-նկարագրել և մեկնաբանել բառապաշարի տարբեր շերտերը, համադրել կամ հակադրել դրանք՝ ըստ նրանց ունեցած ոճական արժեքի
7.8. Ժարգոնային գրեկաբանություններ	բառեր	և	-մեկնաբանել բառապաշարի հարստացման լեզվական և արտալեզվական ուղիները, քննարկել բառապաշարի շերտերից յուրաքանչյուրի դերը այդ գործում
7.9. Հայերենի դարձվածքները. Լրանց ոճական արժեքը		և	-վերլուծել տարբեր բնույթի բնագրեր, տեքստեր, գնահատել դրանց բառապաշարը -բացահայտել տարբեր գրողների բառօգտագործման հնարավորությունները, համեմատել մոտ և տարբեր թեմաներով ստեղծագործած հեղինակների բառապաշարները -գնահատել յուրաքանչյուր բառաշերտի ունեցած դերը խոսքում, վերլուծել այն խոսքի արժանիքների և թերությունների տեսանկյունից - գրավոր և բանավոր խոսքում կիրառել այս բաժնում ստացած գիտելիքներն ըստ անհրաժեշտության

<b>8. Բառապաշարի իմաստաձևային խմբերի ոճական կիրառությունները</b>			
8.1. Հայերենի հոմանիշները. Լրանց ոճական արժեքը			-սահմանել և բնութագրել բառապաշարի իմաստաձևային խմբերը
8.2. Բառային հոմանիշներ			-պարզաբանել այն սկզբունքները, որոնց հիման վրա կատարվում է բառապաշարի իմաստաձևային դասակարգումը
8.3. Զերականական հոմանիշներ			-նկարագրել բառերի ձևային և իմաստային հատկանիշների փոխհարաբերությունն ու միասնությունը յուրաքանչյուր բառախմբում
8.4. Շարահյուսական հոմանիշներ			
8.5. Հականիշներ			-բացահայտել և ներկայացնել յուրաքանչյուր բառախմբի ոճական արժեքն ու արտահայտչական

<p>8.6. Համանուններ</p> <p>8.7. Հարանուններ</p>	<p>հնարավորությունները, քննարկել նրանց ունեցած ոճական երանգավորումները</p> <p>- գնահատել բառապաշարի իմաստաձևային խմբերի դերը գեղարվեստական խոսքում պատկերավորման և արտահայտչական միջոցներ ստեղծելիս</p> <p>- նկարագրել յուրաքանչյուր բառախմբի ունեցած դերը խոսքում, վերլուծել այն խոսքի արժանիքների և թերությունների տեսանկյունից</p> <p>- վերլուծել տարբեր բնույթի բնագրեր, տեքստեր, գնահատել դրանց բառապաշարն ըստ բառերի իմաստաձևային խմբերի</p> <p>- բացահայտել տարբեր գրողների բառօգտագործման հնարավորությունները, համեմատել մոտ և տարբեր թեմաներով ստեղծագործած հեղինակների բառապաշարները՝ ըստ բառերի իմաստաձևային խմբերի</p> <p>- գրավոր և բանավոր խոսքում կիրառել այս բաժնում ստացած գիտելիքներն ըստ անհրաժեշտության</p>
---	---

## 12-րդ դասարան

12-րդ դասարան	
Թեմա	Վերջնարդյունք
<b>1.Քերականական ոճագիտություն</b>	
<b>Ձևաբանական և շարահյուսական ոճագիտություն. նրանց կիրառությունն ու ոճական արժեքը խոսքում</b>	
<b>1.1. Ձևաբանական ոճագիտություն</b>	
1.1.1.Գոյականի ոճական կիրառությունները	-նկարագրել լեզվի՝ ձևաբանական ոճագիտության ուսումնասիրած նյութական բաղադրիչները
1.1.2.Անձնանիշ և իրանիշ գոյականներ	-սահմանել խոսքի մասերը, թվարկել նրանց քերականական կարգերն ու հատկանիշները
1.1.3.Գոյականի հոգնակի թվի կազմության յուրահատկություններ	-մեկնաբանել ձևաբանական զուգաձևու-թյունները, նրանց ոճական նրբերանգները
1.1.4.Հոլովական գործածությունների զուգաձևություններ և տարբերակումներ	-համեմատել ձևաբանական իրողությունների կիրառության առանձնահատկություններն ու ոճական երանգավորումները խոսքում
1.1.5.Ածականի ոճական կիրառությունները	-գնահատել տարբեր խոսքի մասերի կիրառությունը գործառական տարբեր ոճերում
1.1.6.Թվականի ոճական կիրառությունները	-վերլուծել տարբեր բնույթի բնագրեր, տեքստեր, գնահատել դրանք՝ ըստ ձևաբանական իրողությունների կիրառության
1.1.7.Դերանվան ոճական կիրառությունները	
1.1.8.Բայի ոճական կիրառությունները	-քննել և համեմատել տարբեր գրողների ստեղծագործությունները, համադրել և հակադրել մոտ և տարբեր թեմաներով ստեղծագործած հեղինակների լեզուն՝ ըստ նրանցում ձևաբանական տարբերակների ունեցած պատկերավորման, արտահայտչական հնարավորությունների
1.1.9.Մակբայների գործածության յուրահատկությունները	
1.1.10.Կապերի գործածության յուրահատկությունները	
1.1.11.Շաղկապների գործածության յուրահատկությունները	- գրավոր և բանավոր խոսքում կիրառել այս բաժնում ստացած գիտելիքներն ըստ անհրաժեշտության
1.1.12.Վերաբերականների և ձայնարկության գործածության յուրահատկությունները	

1.2. Շարահյուսական ոճագիտություն		
1.2.1. Շարահյուսության հնարավորությունները	ոճական	-տարբերակել շարահյուսական միավորներն ու կարգերը՝ բառակապակցությունը, նախադասությունը, հնչերանգը, շարադասությունը, սահմանել դրանք
1.2.2. Նախադասության կապակցման եղանակները. ոճական արժեքը	անդամների	-բնութագրել նախադասության գլխավոր և երկրորդական անդամների շարադասության ոճական հնարավորությունները և խոսքում կիրառել դրանք
1.2.3. Համաձայնություն		-նկարագրել և մեկնաբանել շարահյուսական միավորների ու կարգերի իմաստային-ոճաբանական գործառույթները
1.2.4. Խնդրառություն		-ընկալել միակազմ նախադասությունների ոճական արժեքը, նրանց դերը գեղարվեստական խոսքում
1.2.5. Առդրություն		
1.2.6. Շարադասություն		-տարբերակել պարզ ու բարդ շարահյուսական կառույցները, սահմանել շարահյուսական հոմանիշները
1.2.7. Միակազմ նախադասությունների ոճական արժեքը		-վերլուծել շարահյուսական միավորների ու կարգերի հոմանշությունը խոսքում
1.2.8. Երկկազմ նախադասությունների ոճական արժեքը		-մեկնաբանել նախադասության անդամների կապակցման եղանակները
1.2.9. Նախադասության տեսակներն ըստ հնչերանգի. նրանց ոճական դրսևորումները		-պարզաբանել գրավոր ու բանավոր խոսքում հանդիպող շարահյուսական սխալները -վերլուծել տեքստի կառուցվածքը, նշել նրա առանձնահատկությունները ոճաբանական, արտահայտչական տեսանկյունից -համադրել և հակադրել տարբեր բնույթի տեքստեր, նշել դրանց կառուցվածքային, ոճաբանական առանձնահատկություններն ու ընդհանրությունները - գրավոր և բանավոր խոսքում կիրառել այս բաժնում ստացած գիտելիքներն ըստ անհրաժեշտության



<b>1.3. Բարդ նախադասությունների ոճական կիրառությունը</b>		
1.3.1. Նախադասությունների կիրառությունը	Համադասական ոճական	-զարգացնել բազմաբնույթ և բարդ տեքստեր ընկալելու և կազմելու կարողություններ՝ շարահյուսական բազմազան կառույցների ճիշտ և տեղին գործածությամբ
1.3.2. Նախադասությունների կապակցման միջոցների կիրառությունը	Ստորադասական և նրանց ոճական	-գործածել բարդ ստորադասական նախադասություններ՝ կախված խոսքի ոճից և գործառնական բնույթից -ձևավորել հաղորդակցական հմտություններ՝ ելնելով հաղորդակցման նպատակից - գրավոր և բանավոր խոսքում կիրառել այս բաժնում ստացած գիտելիքներն ըստ անհրաժեշտության
<b>1.4. Կետադրություն</b>		
1.4.1.Տրոհության նշաններ		-բացատրել կետադրության կանոնների, կետադրական նշանների դերը գրավոր խոսքում
1.4.2.Բացահայտության նշաններ		-բնութագրել առոգանության, տրոհության, բացահայտության նշանները
1.4.3.Առոգանության նշաններ		-թվարկել յուրաքանչյուր կետադրական նշանի կիրառության կանոնները -գտնել և պարզաբանել տարածված կետադրական սխալները -ճիշտ կիրառել կետադրական նշանները, ազատորեն գործածել դրանք գրավոր խոսքում տարբեր իրավիճակներում -կետադրել համր բնագրերը, համեմատել կետադրած տարբերակը համր բնագրի հետ, նշել կետադրական նշանների առանձնահատկություններն ու լեզվական արժեքը -մեկնաբանել կետադրության գործածության դերն ու ազդեցությունը պոեզիայում -կազմել գրագետ, ճիշտ գրավոր խոսք՝ օգտագործելով այս բաժնից ստացած գիտելիքները

## Առարկայի գնահատման սկզբունքները

ԱԲ-ի «Հայոց Լեզու» (խոսքի մշակույթ և ոճագիտության հիմունքներ) առարկայի քննությունները պետք է ստուգեն սովորողի կարողությունները երեք հիմնական ուղղությամբ:

### Ա. Գիտելիք և ըմբռնում

- ըմբռնել հաղորդվող կյուբի (տեքստի) բնույթը, նրա արտահայտած իմաստն ու բովանդակությունը, հեղինակի որոշակի նպատակադրումը.
- բացատրել տարբեր ոճերին բնորոշ բառերի կամ բառաշերտերի գործածությունը տեքստում, ներկայացնել, թե ինչ են փոխանցում դրանք տեքստին, ինչպե՞ս են ձևավորում հեղինակի խոսքի ազդեցությունը և գեղարվեստականությունը.
- ցուցաբերել լեզվական համապատասխան գիտելիքներ:

### Բ. Վերլուծություն և գնահատում

- քննել և վերլուծել տեքստի ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունները՝ մեկնաբանելով՝ ինչպես են դրանք ազդում համատեքստի կառուցվածքի վրա, լեզվական առանձնահատկությունների ընտրությունը ինչպե՞ս է ձևավորում տեքստի իմաստը.
- հիմնավորել նախադասության տեսակների ընտրությունը.
- մեկնաբանել և գնահատել ինչպես է հեղինակը կարողացել միահյուսել լեզվական միջոցները գեղարվեստական պատկեր ստանալու համար:

### Գ. Գրավոր խոսքի կառուցում

- կառուցել գրագետ և տրամաբանված խոսք.
- գրել պարզ, ճշգրիտ, ստեղծագործ մոտեցմամբ տարբեր նպատակներով և տարբեր լսարանների համար.
- գործածել հարուստ և գեղեցիկ բառապաշար:

Ստորև ներկայացված աղյուսակն ընդհանրական պատկերացում է տալիս գնահատման սկզբունքների և քննական բաղադրիչների հարաբերակցության մասին:

Գնահատման սկզբունքը	Կշիռը (%)
Ա. Գիտելիք և ըմբռնում	40
Բ. Վերլուծություն և գնահատում	30
Գ. Գրավոր խոսքի կառուցում	30

Առարկայի ուսումնական շրջանում աշակերտները հանձնում են 6 ընթացիկ քննական աշխատանք:

Աշակերտները յուրաքանչյուր կիսամյակի ավարտին հանձնում են միջանկյալ քննական աշխատանք: Յուրաքանչյուր աշխատանք նախատեսված է 120-130 րոպեի համար և ներառում է

անձանոթ տեքստի լեզվաոճական առանձնահատկությունների վերլուծություն, ստեղծագործական ազատ շարադրանք:

## 2 Հայ գրականություն

### 10-դասարան

10-րդ դասարան	
Թեմա	Վերջնարդյունք
<b>1. Հայ ժողովրդական բանահյուսություն</b>	
1.1 Բանահյուսության ստեղծումը Բանահյուսությունը իբրև սինկրետիկ արվեստ Բանահյուսության կապը երաժշտական արվեստի և պարարվեստի հետ	- ներկայացնել բանահյուսության կապը արվեստի մյուս ճյուղերի հետ
1.2 Բանահյուսական ժանրեր. Քնարական և Եպիկական սեռի ժանրեր Բանահյուսություն և գրականություն. տարբերությունները, կապն ու փոխադարձ ներգործությունը	-սահմանել բանահյուսական ժանրերի առանձնահատկությունները  -բացատրել և ներկայացնել բանահյուսության և գրականության տարբերությունները, փոխադարձ կապը
<b>2. Հայ միջնադարյան գրականություն</b>	
2.1.Հայ գրականության սկզբնավորումը Մեսրոպ Մաշտոց Գրերի գյուտը Ոսկեդար. հայ ինքնուրույն գրականության ձևավորումը Կորյուն «Վարք Մաշտոցի»	- գրողի կենսագրական տվյալների, գրական-հասարակական գործունեության միջոցով ստեղծել գրողի՝ որպես քաղաքացու ամբողջական կերպարը, բացահայտել գրողի կենսագրության և ստեղծագործության միջև աղերսները
2.2 Հայ անհատական բանաստեղծություն՝օրհներգ. օրհներգի ժանրային առանձնահատկությունները, տեսակները	-սահմանել օրհներգի ժանրային առանձնահատկությունները
2.3 5-րդ դարի հայ մատենագրության ընդհանուր բնութագիրը Պատմագրություն	- ներկայացնել գրական ստեղծագործությունը որպես տվյալ ժամանակի գեղարվեստական մտածողության, աշխարհընկալման արտացոլում

<p>Գեղարվեստի և պատմության ներհյուսումը 5-րդ դարի հայ պատնագրության մեջ</p> <p>Ագաթագեղոս, Փավստոս Բուզանդ</p>	<ul style="list-style-type: none"> <li>- գրական ստեղծագործության մեջ բացահայտել ազգային ինքնության, հոգեկերտվածքի ուղղակի և անուղղակի դրսևորումները</li> </ul>
<p>2.4 Եղիշե, Ղազար Փարպեցի</p>	<ul style="list-style-type: none"> <li>- գրական ստեղծագործության մեջ բացահայտել ազգային ինքնության, հոգեկերտվածքի ուղղակի և անուղղակի դրսևորումները</li> </ul>
<p>2.5 Մովսես Խորենացու կյանքը, ապրած ժամանակաշրջանը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- գրողի կենսագրական տվյալների, գրական-հասարակական գործունեության միջոցով ստեղծել գրողի՝ որպես քաղաքացու ամբողջական կերպարը, բացահայտել գրողի կենսագրության և ստեղծագործության միջև աղերսները</li> </ul>
<p>2.6 «Հայոց պատմություն» երկի ընդհանուր բնութագիրը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- գրական ստեղծագործության վերլուծությամբ ինքնադրսևորել ստեղծագործական ունակությունները, երևակայությունը, լեզվամտածողությունը</li> </ul>
<p>2.7 Պատմության կառուցվածքը գաղափարը, առանձնահատկությունները</p>	<ul style="list-style-type: none"> <li>- գրական ստեղծագործության մեջ բացահայտել ազգային ինքնության, հոգեկերտվածքի ուղղակի և անուղղակի դրսևորումները</li> </ul>
<p>2.7 Առասպելներ</p> <p>Առասպելը որպես հորինումի սկիզբ. հայ ժողովրդի ծագումնաբանությունը</p> <p>«Հայկ և Բել», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Տիգրան և Աժդահակ», «Արտաշես և Արտավազդ»</p>	<ul style="list-style-type: none"> <li>- սահմանել ժանրային առանձնահատկությունները, գտնել միջժանրային առնչությունները գրական ստեղծագործությունների միջև</li> <li>- գրական ստեղծագործության վերլուծությամբ ինքնադրսևորել ստեղծագործական ունակությունները, երևակայությունը, լեզվամտածողությունը</li> <li>- գրական ստեղծագործությունների մեջ գտնել և ներկայացնել հայ գրականության պատմության և հայ ժողովրդի պատմության միջև առնչությունը, վերհանել ազգային պատմության և ազգային գրականության փոխազդեցությունը</li> </ul>
<p>2.8 «Ողբ» հավելվածը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- գրական ստեղծագործությունների մեջ գտնել և ներկայացնել հայ գրականության պատմության և հայ ժողովրդի պատմության միջև առնչությունը, վերհանել ազգային պատմության և ազգային գրականության փոխազդեցությունը</li> <li>- ինքնուրույն բացահայտել գրական ստեղծագործության արդիական նշանակությունը, ստեղծել ուղղակի և անուղղակի կապ արդի քաղաքակրթության, կենսակերպի, հանրային արժեհամակարգի հետ</li> </ul>

<b>3. «Սասնա ծռեր» դյուցազներգությունը.</b>	
3.1 Դյուցազներգությունը որպես բանահյուսական տեսակ, պատմական և առասպելական հիմքը. պատում և ասացողներ	- գրական ստեղծագործությունների մեջ գտնել և ներկայացնել հայ գրականության պատմության և հայ ժողովրդի պատմության միջև առնչությունը, վերհանել ազգային պատմության և ազգային գրականության փոխազդեցությունը
3.2 Դյուցազներգության կառուցվածքն ու ընդհանուր բովանդակությունը	- գրական ստեղծագործությունների վերլուծման և արժևորման միջոցով հանգել արժեքների գիտակցված համակարգի՝ հիմնված ազգային ինքնության և մարդկային առաքինությունների վրա:  - ազգային գրականության պատմությունը զուգահեռել համաշխարհային գրականության գեղագիտական հիմնական ուղղություններին, ժանրային զարգացումներին, բացահայտել համաշխարհային գրականության և ազգային գրականության առնչությունները և տարբերությունները
3.3 Ծյուղերը, գլխավոր հերոսները	- գրական ստեղծագործությունների վերլուծման և արժևորման միջոցով հանգել արժեքների գիտակցված համակարգի՝ հիմնված ազգային ինքնության և մարդկային առաքինությունների վրա
<b>4. Հայ գրականության վաղ վերածնության սկզբնավորումը</b>	
4.1 10-րդ դարում հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական վիճակի ազդեցությունը հայ գրականության զարգացման ընթացքի վրա	- գրական ստեղծագործությունների մեջ գտնել և ներկայացնել հայ գրականության պատմության և հայ ժողովրդի պատմության միջև առնչությունը, վերհանել ազգային պատմության և ազգային գրականության փոխազդեցությունը
4.2 Գրիգոր Նարեկացու կյանքը և թողած գրական ժառանգության ընդհանուր բնութագիրը	- գրողի կենսագրական տվյալների, գրական-հասարակական գործունեության միջոցով ստեղծել գրողի՝ որպես քաղաքացու ամբողջական կերպարը, բացահայտել գրողի կենսագրության և ստեղծագործության միջև աղերսները  - ազգային գրականության պատմությունը զուգահեռել համաշխարհային գրականության գեղագիտական հիմնական ուղղություններին, ժանրային զարգացումներին, բացահայտել համաշխարհային գրականության և ազգային գրականության առնչությունները և տարբերությունները
4.3 «Մեղեդի ծննդյան» տաղը	- ներկայացնել գրական ստեղծագործությունը որպես տվյալ ժամանակի գեղարվեստական մտածողության, աշխարհընկալման արտացոլում  - գրական ստեղծագործության վերլուծությամբ ինքնադրսևորել ստեղծագործական ունակությունները, երևակայությունը, լեզվամտածողությունը
4.4 «Վարդավառի» տաղը	- ներկայացնել գրական ստեղծագործությունը որպես տվյալ ժամանակի գեղարվեստական մտածողության, աշխարհընկալման արտացոլում

	<ul style="list-style-type: none"> <li>- գրական ստեղծագործության վերլուծությամբ ինքնադրսևորել ստեղծագործական ունակությունները, երևակայությունը, լեզվամտածողությունը</li> </ul>
4.5 «Մատյան ողբերգության» աղոթամատյանը	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել գրական ստեղծագործությունը որպես տվյալ ժամանակի գեղարվեստական մտածողության, աշխարհընկալման արտացոլում</li> <li>- գրական ստեղծագործության վերլուծությամբ ինքնադրսևորել ստեղծագործական ունակությունները, երևակայությունը, լեզվամտածողությունը</li> </ul>
4.6 Աղոթամատյանի էությունը, նպատակը, կառուցվածքը	<ul style="list-style-type: none"> <li>- վերլուծությամբ ինքնադրսևորել ստեղծագործական ունակությունները, երևակայությունը, լեզվամտածողությունը</li> </ul>
4.7 Աղոթամատյանի պոտիկական արվեստը, լեզվական միջոցների կիրառումը /հակադրություններ, հանգ, կրկնություններ/	<ul style="list-style-type: none"> <li>- տիրապետել գրական ստեղծագործության վերլուծության բազմապիսի մեթոդների՝ երկի կառուցվածքային առանձնահատկությունների դիտարկման, կերպարների զարգացման ընթացքի ներկայացման, համադրական, վերլուծական, զուգահեռների, սուբյեկտիվ այլընտրանքային ընկալման</li> </ul>
<b>5. Աստվածաշնչյան առակներ</b>	
<p>Առակի ժանրը</p> <p>Սահմանել ժանրային առանձնահատկությունները, գտնել միջժանրային առանձնահատկությունները գրական ստեղծագործությունների միջև</p>	
5.1 Հայ առակագրությունը	<ul style="list-style-type: none"> <li>- գրողի կենսագրական տվյալների, գրական-հասարակական գործունեության միջոցով ստեղծել գրողի՝ որպես քաղաքացու ամբողջական կերպարը, բացահայտել գրողի կենսագրության և ստեղծագործության միջև աղերսները</li> <li>- գրական ստեղծագործության մեջ բացահայտել ազգային ինքնության, հոգեկերտվածքի ուղղակի և անուղղակի դրսևորումները</li> </ul>
<p>Մխիթար Գոշի կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը</p> <p>Գոշի առակները.</p> <p>կառուցվածքը, թեմատիկան և ուղղվածությունը</p>	
5.2 Վարդան Այգեկցու կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը	<ul style="list-style-type: none"> <li>- գրական ստեղծագործության մեջ բացահայտել ազգային ինքնության, հոգեկերտվածքի ուղղակի և անուղղակի դրսևորումները</li> <li>- սահմանել ժանրային առանձնահատկությունները, գտնել միջժանրային առանձնահատկությունները գրական ստեղծագործությունների միջև</li> </ul>
<p>Այգեկցու առակների թեմատիկան և ուղղվածությունը, առակավոր ճառեր</p>	
<b>6. Ֆրիկի կյանքի հայտնի փաստերը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը</b>	
<ul style="list-style-type: none"> <li>- գրական ստեղծագործությունների մեջ գտնել և ներկայացնել հայ գրականության պատմության և հայ ժողովրդի պատմության միջև առանձնահատկությունը, վերհանել ազգային պատմության և ազգային գրականության փոխազդեցությունը</li> <li>- գրողի կենսագրական տվյալների, գրական-հասարակական գործունեության միջոցով ստեղծել գրողի՝ որպես քաղաքացու ամբողջական կերպարը, բացահայտել գրողի կենսագրության և ստեղծագործության միջև աղերսները</li> </ul>	

6.1 «Ընդդեմ ֆալսքին» բանաստեղծությունը	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել գրական ստեղծագործությունը որպես տվյալ ժամանակի գեղարվեստական մտածողության, աշխարհընկալման արտացոլում</li> <li>- գրական ստեղծագործության վերլուծությամբ ինքնադրսևորել ստեղծագործական ունակությունները, երևակայությունը, լեզվամտածողությունը</li> </ul>
6.2 «Գանգատ» բանաստեղծությունը	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել գրական ստեղծագործությունը որպես տվյալ ժամանակի գեղարվեստական մտածողության, աշխարհընկալման արտացոլում</li> <li>- գրական ստեղծագործության վերլուծությամբ ինքնադրսևորել ստեղծագործական ունակությունները, երևակայությունը, լեզվամտածողությունը</li> </ul>

**7. Հայրենը որպես գրական տեսակ**

Նահապետ Քուչակ

- սահմանել ժանրային առանձնահատկությունները, գտնել միջժանրային առնչությունները գրական ստեղծագործությունների միջև

7.1 Հայրենների բովանդակությունը Սիրո հայրեններ	<ul style="list-style-type: none"> <li>- ինքնուրույն բացահայտել գրական ստեղծագործության արդիական նշանակությունը, ստեղծել ուղղակի և անուղղակի կապ արդի քաղաքակրթության, կենսակերպի, հանրային արժեհամակարգի հետ</li> <li>- գրական ստեղծագործության վերլուծությամբ ինքնադրսևորել ստեղծագործական ունակությունները, երևակայությունը, լեզվամտածողությունը</li> </ul>
---	--

**8. Սայաթ-Նովայի կյանքն ու ստեղծագործության ընդհանուր բնութագիրը**

Սիրո խաղերը. «Թամամ աշխարհ պտուտ եկա...»

- գրողի կենսագրական տվյալների, գրական-հասարակական գործունեության միջոցով ստեղծել գրողի՝ որպես քաղաքացու ամբողջական կերպարը, բացահայտել գրողի կենսագրության և ստեղծագործության միջև աղերսները

- գրական ստեղծագործությունների վերլուծման և արժևորման միջոցով հանգել արժեքների գիտակցված համակարգի՝ հիմնված ազգային ինքնության և մարդկային առաքիլությունների վրա:

**Հայ նոր գրականության սկզբնավորումը**

Ներկայացնել գրական ստեղծագործությունը որպես տվյալ ժամանակի գեղարվեստական մտածողության, աշխարհընկալման արտացոլում

1. Խ. Աբովյանի կյանքը և գործունեության ընդհանուր բնութագիրը	<ul style="list-style-type: none"> <li>- գրական ստեղծագործությունների մեջ գտնել և ներկայացնել հայ գրականության պատմության և հայ ժողովրդի պատմության միջև առնչությունը, վերհանել ազգային պատմության և ազգային գրականության փոխազդեցությունը</li> <li>- գրողի կենսագրական տվյալների, գրական-հասարակական գործունեության միջոցով ստեղծել գրողի՝ որպես քաղաքացու ամբողջական կերպարը, բացահայտել գրողի կենսագրության և ստեղծագործության միջև աղերսները</li> </ul>
---	---

<p>2. «Վերջ Հայաստանի» վեպի ստեղծման հանգամանքները</p>	<ul style="list-style-type: none"> <li>- գրական ստեղծագործությունների մեջ գտնել և ներկայացնել հայ գրականության պատմության և հայ ժողովրդի պատմության միջև ամնչությունը, վերհանել ազգային պատմության և ազգային գրականության փոխազդեցությունը</li> <li>- սահմանել ժանրային առանձնահատկությունները, գտնել միջժանրային ամնչությունները գրական ստեղծագործությունների միջև</li> </ul>
<p>3. Վեպի «Հառաջաբան»-ը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ազգային գրականության պատմությունը զուգահեռել համաշխարհային գրականության գեղագիտական հիմնական ուղղություններին, ժանրային զարգացումներին, բացահայտել համաշխարհային գրականության և ազգային գրականության ամնչությունները և տարբերությունները</li> <li>- վերհանել և ստեղծել գրական նախընթաց ստեղծագործությունների, գրական ավանդույթի հետ կապը</li> </ul>
<p>4. Վեպի դիպաշարը և կառուցվածքը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- գրական ստեղծագործությունների մեջ գտնել և ներկայացնել հայ գրականության պատմության և հայ ժողովրդի պատմության միջև ամնչությունը, վերհանել ազգային պատմության և ազգային գրականության փոխազդեցությունը</li> <li>- ներկայացնել գրական ստեղծագործությունը որպես տվյալ ժամանակի գեղարվեստական մտածողության, աշխարհընկալման արտացոլում</li> </ul>
<p>5. Կոնֆլիկտը և կերպարները</p>	<ul style="list-style-type: none"> <li>- գրական ստեղծագործության մեջ բացահայտել ազգային ինքնության, հոգեկերտվածքի ուղղակի և անուղղակի դրսևորումները</li> <li>- ինքնուրույն բացահայտել գրական ստեղծագործության արդիական նշանակությունը, ստեղծել ուղղակի և անուղղակի կապ արդի քաղաքակրթության, կենսակերպի, հանրային արժեհամակարգի հետ</li> </ul>
<p>6. Հեղինակի կերպարը վեպում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- գրական ստեղծագործության մեջ բացահայտել ազգային ինքնության, հոգեկերտվածքի ուղղակի և անուղղակի դրսևորումները</li> <li>- գրական ստեղծագործության վերլուծությամբ ինքնադրսևորել ստեղծագործական ունակությունները, երևակայությունը, լեզվամտածողությունը</li> </ul>
<p>7. Մ. Նալբանդյանի կյանքը և գործունեության ընդհանուր բնութագիրը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- գրական ստեղծագործությունների մեջ գտնել և ներկայացնել հայ գրականության պատմության և հայ ժողովրդի պատմության միջև ամնչությունը, վերհանել ազգային պատմության և ազգային գրականության փոխազդեցությունը</li> <li>- գրական ստեղծագործության մեջ բացահայտել ազգային ինքնության, հոգեկերտվածքի ուղղակի և անուղղակի դրսևորումները</li> <li>- գրողի կենսագրական տվյալների, գրական-հասարակական գործունեության միջոցով ստեղծել գրողի՝ որպես քաղաքացու ամբողջական կերպարը, բացահայտել</li> </ul>



	գրողի կենսագրության և ստեղծագործության միջև աղերսները
8. «Մանկության օրեր» բանաստեղծությունը «Ապոլոնիս» բանաստեղծությունը	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել գրական ստեղծագործությունը որպես տվյալ ժամանակի գեղարվեստական մտածողության, աշխարհընկալման արտացոլում</li> <li>- ինքնուրույն բացահայտել գրական ստեղծագործության արդիական նշանակությունը, ստեղծել ուղղակի և անուղղակի կապ արդի քաղաքակրթության, կենսակերպի, հանրային արժեհամակարգի հետ</li> <li>- գրական ստեղծագործությունների վերլուծման և արժևորման միջոցով հանգել արժեքների գիտակցված համակարգի՝ հիմնված ազգային ինքնության և մարդկային առաքինությունների վրա:</li> </ul>
9. Բաֆֆու կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը	<ul style="list-style-type: none"> <li>- գրական ստեղծագործությունների մեջ գտնել և ներկայացնել հայ գրականության պատմության և հայ ժողովրդի պատմության միջև առնչությունը, վերհանել ազգային պատմության և ազգային գրականության փոխազդեցությունը</li> <li>- գրողի կենսագրական տվյալների, գրական-հասարակական գործունեության միջոցով ստեղծել գրողի՝ որպես քաղաքացու ամբողջական կերպարը, բացահայտել գրողի կենսագրության և ստեղծագործության միջև աղերսները</li> </ul>
10. Ռոմանտիզմի գրական ուղղությունը Գեղագիտական հիմնական սկզբունքները	- ներկայացնել ռոմանտիզմի գեղագիտական սկզբունքների դրսևորումը Բաֆֆու ստեղծագործություններում
11. «Սամվել» պատմական պոեմի հարաշրջանը, աղբյուրները Վեպի գրության շարժառիթը, նպատակը	<ul style="list-style-type: none"> <li>- սահմանել ժանրային առանձնահատկությունները, գտնել միջժանրային առնչությունները գրական ստեղծագործությունների միջև</li> <li>- ներկայացնել գրական ստեղծագործությունը որպես տվյալ ժամանակի գեղարվեստական մտածողության, աշխարհընկալման արտացոլում</li> </ul>
12. Դիպաշարը և կերպարները	- տիրապետել գրական ստեղծագործության վերլուծության բազմապիսի մեթոդների՝ երկի կառուցվածքային առանձնահատկությունների դիտարկման, կերպարների զարգացման ընթացքի ներկայացման, համադրական, վերլուծական, զուգահեռների, սուբյեկտիվ այլընտրանքային ընկալման
13. Հայրենասեր ուժերի պայքարը	- գրական ստեղծագործության վերլուծությամբ ինքնադրսևորել ստեղծագործական ունակությունները, երևակայությունը, լեզվամտածողությունը
